

Բանալի բառեր՝ լոգիստիկա, հոսք, ռիսկ, ռիսկերի կառավարում, ապահովագրություն:

ՀՏԴ 338

ՌԻՍԿԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԼՈԳԻՍՏԻԿԱՅՈՒՄ

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Լիդա ԱՂԱԶԱՆՅԱՆ
ՀԱՊՀ ասպիրանտ

Ատենախոսության թեմա՝
**Լոգիստիկայի զարգացման հիմնախնդիրները
ՀՀ արդյունաբերությունում**

Գիտական ղեկավար՝
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Շուկայական պայմաններում ցանկացած տնտեսական կազմակերպություն անխուսափելիորեն բախվում է անկանխատեսելի իրադարձությունների, ինչը պայմանավորում է սպասվելիք վերջնական արդյունքի ստացման գործում վստահության պակասը: Այդպիսի անվստահությունը որոշվում է ռիսկերի ազդեցությամբ, որոնց առաջացումը դժվար է կանխատեսել և որոնցից խուսափելը, որպես կանոն, հնարավոր չէ: Անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր հնարավոր ռիսկերը, ժամանակին բացահայտել դրանց առաջացման աղբյուրները, վերլուծել դրանց առանձնահատկությունները, որոշել իրադարձությունների տեղի ունենալու հավանականությունը, որպեսզի նախապես հնարավոր լինի իրականացնել նախագծուչական միջոցառումներ և կայացնել ռիսկերի վրա ազդելու արդյունավետ որոշումներ:

Ռիսկը երևույթ է, որը գործում է ամենուրեք, այդ թվում և տնտեսական կյանքում: Այն ձեռնարկատիրության անբախտելի հատկությունն է և ցանկացած տնտեսական համակարգի, այդ թվում և լոգիստիկական համակարգի գործունեության անբաժան ուղեկիցը:

Լոգիստիկական գործունեությունը՝ սկսած ապրանքանյութական արժեքների տեղափոխումից մինչև պատրաստի արտադրանքի իրացումը ներառում է բազմաթիվ տարատեսակ տարրեր, որոք գործում են տարբեր գործունեության ազդեցության տակ և կապված են որոշակի ռիսկի հետ:

Ռիսկերը լոգիստիկական համակարգում կապված են նյութական, տեղեկատվական, ֆինանսական և սպասարկման հոսքերի կառավարման գործունեության հետ:

Ռիսկը լոգիստիկայում դիտարկվում է որպես կազմակերպության գործունեության բաղկացուցիչ տարր և որպես սպասվող արդյունքի իրականացման հնարավոր սահմանափակում: Այն տնտեսական հոսքերի ոչ արդյունավետ կառավարման հետևանքով կորուստների առաջացման հավանականությունն է [1, էջ 236]:

Լոգիստիկական համակարգում ռիսկը կարելի է բնութագրել որպես անբարենպաստ իրադարձություն, որը լոգիստիկական գործունեության ընթացքում հոսքերի էլքում կարող է բերել պլանավորված ցուցանիշների նկատմամբ փաստացի ցուցանիշների շեղումների:

Եթե առաջներում ռիսկերը լոգիստիկայում մեծապես կապված էին ապրանքի քանակի և ծախսերի մեծության հետ, ապա ներկայումս անորոշությունը կապված է նոր տեխնոլոգիաների, սոցիալական գործոնների, ապրանքների սպառողական հատկությունների և սպառողների հիմնարար պահանջմունքների բավարարման մակարդակի նախապատվությունների հետ:

Լոգիստիկական գործընթացներում անորոշության և ռիսկի առաջացման հիմնական պատճառներին են դասվում պատահականությունը, տեղեկատվական խզումը, իրազեկության խզումը, հակազդումը: [2, էջ 126]:

Պատահականությունը արտահայտվում է, երբ համանման պայմաններում իրադարձությունը տեղի է ունենում տարբեր կերպ (նոր սարքավորման շարքից դուրս գալը, նոր տեխնոլոգիայի կիրառման խանգարումները, խափանումները նյութերի մատակարարման և արտադրանքի իրացման համակարգերում և այլն):

Տեղեկատվական խզումը արտահայտվում է արտաքին միջավայրի վերաբերյալ անբավարար տեղեկատվության դեպքում, ինչն ազդում է իրադարձության կամ սպասվող արդյունքի վերաբերյալ կայացվող որոշումների վրա:

Իրազեկության խզումը արտահայտվում է կատարվող վերլուծությունների արդյունքների վրա սուբյեկտիվ գործոնների (գիտելիքների բացակայություն, սխալ վերլուծություններ և այլն) ազդեցությամբ:

Հակազդումը արտահայտվում է կողմերի շահերի անհամապատասխանության դեպքում (աշխատանքային բախումներ, պայմանագրային պարտավորությունների խախտում, անբարեխիղճ մրցակցություն և այլն):

Ռիսկերը լոգիստիկական գործունեության մեջ երբեմն առաջանում են ոչ իրական նպատակների սահմանման և կառավարման բացթողումների հետևանքով:

Ռիսկերը լոգիստիկայում կարող են պայմանավորված լինել նաև պահանջարկի անկանխատեսելիությամբ, հագեցվածությամբ և տարբերականացմամբ, շուկայի ոչ հավաստի իրավիճակային ցուցանիշներով, մրցակցության ուժեղացմամբ:

Ռիսկերի ուսումնասիրությունը լոգիստիկայում կարևոր նշանակություն ունի Հայաստանի տնտեսական համակարգում, որտեղ անորոշության բարձր աստիճանը առկա է լոգիստիկական ընկերությունների զարգացման բոլոր փուլերում: Հայաստանում ռիսկերի կառավարման ոչ պատշաճ մակարդակը բացասաբար է անդրադառնում կազմակերպությունների լոգիստիկական համակարգերի կայունության ապահովման և հեռանկարային զարգացման ուղղությունների մշակման գործընթացների վրա:

Լոգիստիկական համակարգը բարդ համակարգ է, այն ընդգրկում է տարբեր ենթահամակարգեր: Դրանցում ներգրավված են տարբեր շենքեր, կառուցվածքներ, տրանսպորտային միջոցներ, որակյալ անձնակազմ և այլն: Նյութական ռեսուրսների շարժումը իրականացվում է շրջանառության և արտադրության ոլորտներում:

Շրջանառության ոլորտը ընդգրկում է ապրանքների և ֆինանսական միջոցների շարժումը (գնում, իրացում, տեղափոխում, պահեստավորում և պահպանում և այլն): Արտադրության ոլորտը ընդգրկում է արտադրանքի պատրաստման և տեղափոխման հիմնական և օժանդակ տեխնոլոգիական գործառնությունները:

Շուկայական հարաբերությունների զարգացման և սուր մրցակցության պայմաններում էլ ավելի է բարդանում լոգիստիկական շղթայի միջև կապերը, ավելանում է օղակների թիվը, կրճատվում, իսկ երբեմն էլ վերանում են դրանցում ապրանքանյութական պաշարները: Այս ամենի շնորհիվ արագանում է նյութական և տեղեկատվական հոսքերի շարժը, բայց, որպես հետևանք, նվազում է լոգիստիկական համակարգի հուսալիությունը, առաջանում են անկայունության միտումներ:

Միաժամանակ լոգիստիկական համակարգի բազմօղակությունը ենթադրում է համակարգում խափանումների հնարավորություն և կապված է բարձր աստիճանի անորոշության հետ, որն էլ պայմանավորում է հնարավոր ռիսկի բարձր մակարդակ:

Յետևաբար, լոգիստիկական համակարգում հուսալիության անհրաժեշտ մակարդակի պահպանման համար անհրաժեշտ է իրականացնել միջոցառումների որոշակի համալիր, որն էլ, իր հերթին, պետք է խափանման հավանականությունը հասցնի նվազագույնի [3, էջ 123]:

Լոգիստիկական համակարգում ռիսկը ներառում է հետևյալ հիմնական տարրերը [4, էջ 378]:

անորոշության հետ, որն էլ

- առևտրային ռիսկ, որն առաջանում է մատակարարումների խափանման, արտադրանքի թերամատակարարման, մատակարարման ժամկետների խախտման, ֆինանսական պարտավորությունների թերակատարման և այլ դեպքերում:

- ունեցվածքի կորստի ռիսկ, որն առաջանում է անբարենպաստ բնական պայմանների, տարերային աղետների պատճառով:

- ռիսկ, որը պայմանավորված է ապրանք-նյութական արժեքների թալանման կամ տրանսպորտային միջոցների գողության դեպքերով:

- Էկոլոգիական ռիսկ, որն առաջանում է արտադրանքի տեղափոխման կամ պահպանման ժամանակ շրջակա միջավայրին հասցրած վնասի դեպքում:

- տեխնիկական ռիսկ, որը կապված է լոգիստիկական համակարգի տեխնիկական միջոցների շահագործման հետ:

Ռիսկերի բոլոր տեսակները լոգիստիկայում փոխկապակցված են և անմիջականորեն ազդում են լոգիստիկական գործունեության արդյունքների վրա: Մեկ տեսակի ռիսկի փոփոխությունը առաջացնում է մյուս բոլոր տեսակների փոփոխություն: Այդ պատճառով էլ ռիսկային գործունեությունը դիտարկելիս անհրաժեշտ է ցուցաբերել համալիր մոտեցում:

Լոգիստիկական գործունեությունը շատ հաճախ կապված է այս կամ այն կառավարչական որոշումների անբարենպաստ արդյունքների և վնասակար հետևանքների առաջացման հնարավորության հետ: Այդ պատճառով էլ անհրաժեշտություն է առաջանում մշակելու ռիսկային իրավիճակների առաջացման հավանականության նվազեցման մեթոդներ և միջոցներ, որոնք իրականացվում են ռիսկերի կառավարման շրջանակներում:

Լոգիստիկայում ռիսկերի կառավարումը միջոցառումների ամբողջություն է, որն ուղղված է լոգիստիկական համակարգում վտանգների և անցանկալի հետևանքների նախագուշակմանը կամ վերացմանը [5, էջ 104]: Ռիսկերի կառավարումը լոգիստիկայում ներառում է լոգիստիկական գործունեության հետևանքների բացահայտումը, բացասական հետևանքներին արագ արձագանքումը և դրանց վերացման միջոցառումների մշակումը: Ռիսկերի կառավարումը կապված է ռիսկի վերլուծության, գնահատման և որոշումների ընդունման հետ, որոնք թույլ են տալիս մեծացնելու ռիսկային իրավիճակների դրական և նվազեցնելու բացասական հետևանքները:

Ռիսկի վերլուծության ժամանակ բացահայտվում են լոգիստիկական գործընթացներում բացասական հետևանքները և կորուստները և սահմանվում կառավարչական որոշումների արդյունավետ տարբերակները:

Ռիսկի գնահատումը իրականացվում է վտանգի օջախների բնութագրման, դրանց ազդեցության չափերի և բնույթի որոշման և ընդհանրացված եզրահանգումների ստացման համար:

Ռիսկը գնահատելու և համապատասխան որոշում ընդունելու համար անհրաժեշտ է հավաքել էլակետային տեղեկատվություն: Ռիսկերի վերաբերյալ բավականաչափ լրիվ և ամբողջական տեղեկատվությունը ռիսկերի կառավարման արդյունավետ միջոցների մշակման հիմքն է:

Ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով ռիսկեր առաջացնող առավել կարևոր գործոնները դասակարգվում են կախված դրանց առաջացման աղբյուրներից: Այդպիսի մոտեցումը թույլ է տալիս վերլուծել ռիսկային իրավիճակները և ռիսկերը, որոնք գործում են լոգիստիկայի առանձին գործառնության ոլորտներում:

Այսպես, մատակարարման ոլորտում ռիսկերի առանցքային աղբյուրներ են հումքի, նյութերի, համալրող ապրանքների ձեռքբերման հետ կապված գործառնությունները, մատակարարների հետ պայմանագրային հարաբերությունները, անհամամասնությունները նյութերի մատակարարման և պատրաստի արտադրանքի տեղափոխման պայմանների միջև, նյութերի մատակարարման և դրանց արտադրություն բաց թողնման ժամկետների միջև, դրամական եկամուտների ստացման և մատակարարումների վճարման պայմանների միջև և այլն:

Արտադրության ոլորտում ռիսկերի աղբյուրներ են արտադրանքի արտադրական-տեխնոլոգիական ցիկլը, արտադրության անարդյունավետ կազմակերպման և կառավարման համակարգը և այլն:

Բաշխման ոլորտում ռիսկերի աղբյուրներ են կազմակերպության քաղաքականությունը իրացման գործընթացներում (ապրանքի բնութագրերը, օպտիմալ գինը, խթանման մեթոդները և այլն), սպառողական վարքի առանձնահատկությունները, մրցակիցները և նրանց վարքը շուկայում և այլն:

Ռիսկերի աղբյուր են նաև ֆինանսական հոսքերի կառավարման գործընթացները: Դրանք հիմնականում կապված են ֆինանսական գործակալների (մատակարարներ, ենթակապալառուներ, հարկային և վերահսկող մարմիններ) գործողությունների հետ:

Ռիսկերի հիմնական աղբյուրներից են տեղեկատվական հոսքերը, որոնց օգնությամբ իրականացվում է կազմակերպության ներսում կառուցվածքային ստորաբաժանումների միջև փոխգործակցությունը, ինչպես նաև կազմակերպության և արտաքին միջավայրի կապը:

Ռիսկի տարրերը կապված են նաև լոգիստիկական աուտսորսինգի ռազմավարության իրականացման հետ:

Աուտսորսինգի վերաբերյալ որոշումները ընդգրկում են ոչ միայն օգուտ ստանալու, այլ նաև որոշակի ռիսկի հետ բախվելու հնարավորությունը: Դրանք ռիսկերն են ստիպում շատ ընկերությունների, այդ թվում և հայկական, որտեղ գործարարության վարման ռիսկերը շատ բարձր են, հրաժարվել աուտսորսինգից և ինքնուրույն զբաղվել այս կամ այն գործառնությամբ:

Լոգիստիկական աուտսորսինգում ռիսկերը կարող են կապված լինել նաև տրանսակցիոն ծախսերի մեծացման, գործընթացների վրա ազդեցության և հսկողության աստիճանի նվազման, գործառնությունների կատարման որակի հնարավոր իջեցման հետ և այլն:

Դետևաբար, աուտսորսինգի դեպքում կազմակերպությունը ռիսկի է գնում գործառնությունների իրականացման վրա հսկողության կորստի, ծախսերի մեծացման, ինչպես նաև շուկայական իրավիճակի գնահատման կարողության թուլացման ուղղությամբ: Այդ պատճառով էլ լոգիստիկական աուտսորսինգի ռազմավարության արդյունավետ իրականացումը ենթադրում է փոխադարձ վստահություն, նպատակների համաձայնեցում, որոշումների համատեղ կայացում:

Ռիսկը և դրա հետ կապված նյութական կորուստը նշանակալի չափով կարող են նվազագույնի հասցվել լոգիստիկական գործընթացներում ընդգրկված անձնակազմի գործունեությամբ, ինչը, սակայն, չի բացառում, այլ, ընդհակառակը, ենթադրում է մասնագիտացված ապահովագրական ընկերությունների կողմից լոգիստիկական ռիսկերի լրացուցիչ ապահովագրում: Այս դեպքում լոգիստիկական գործընթացի մասնակիցների և ապահովագրական ընկերությունների միջև փոխհարաբերությունները կարգավորվում են ապահովագրության պայմանագրով:

Ապահովագրությունը լոգիստիկական համակարգերում բարձր և բազմակողմանի գործընթաց է, որը պահանջում է ապահովագրության օպտիմալ պայմանների համալիր հաշվարկ: Ապահովագրական ծառայությունների շուկայում մրցակցությունը հնարավորություն է կտա ապահովել փոխադարձ առևտրային օգուտ՝ ինչպես ապահովագրիչի, այնպես էլ ապահովագրողի համար: Սակայն, բոլոր դեպքերում, լոգիստիկական համակարգի անխափան և արդյունավետ աշխատանքի ապահովումը ընկած է լոգիստիկական գործընթացի անմիջական մասնակիցների վրա:

Լոգիստիկայում ռիսկի հավանականությունը կարելի է իջեցնել արտադրող արտադրանքի անվանացանկի և ապահովագրության մատուցվող ծառայությունների տեսակների բազմաօրինակացման կամ ընդլայնման միջոցով: Ռիսկի աստիճանը կարող է փոքրացվել, իսկ դրա հետևանքները մեղմացվել կամ վերանալ հետևյալ միջոցառումների իրականացման արդյունքում.

- ռիսկի հավանականության կանխատեսումը և անորոշության գործոնի փոքրացումը;
- պահուստային, ապահովագրական հիմնադրամների ստեղծումը;
- ռիսկի տեղափոխումը երրորդ կողմի վրա;
- գործարքի մասնակիցների միջև վնասի վերաբաշխումը և այլն:

Լոգիստիկական ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ է հետևել գործընկերների ֆինանսական դրությանը, կատարել ռիսկերի բոլոր տեսակների մակարդակների հետևողական վերլուծություն և որոշել դրանց օպտիմալ նշանակությունը:

Լոգիստիկայում ռիսկերի կառավարման կարևոր ուղղություններից է որոշումների, հրահանգների և մյուս նորմատիվային փաստաթղթերի մշակումը, որոնք ապահովում են ընտրված ռիսկային այլընտրանքի իրականացումը: Այդ փաստաթղթերում անհրաժեշտ է արտացոլել ռիսկերի կառավարման իրավական տեսանկյունները և սահմանել, թե երբ և ինչ պայմաններում ռիսկը կարելի է համարել արդարացված և իրավաչափ:

Օգտագործված գրականություն

1. Афанасенко И.Д., Борисова В.В. Логистика снабжения, 2-е изд., СПб, Питер, 2016, с. 384.
2. Логистика и управление цепями поставок, Под ред. Б.А. Аникина и Т.А. Родкиной, М., Проспект, 2017, с. 216.
3. Промышленная логистика: логистико-ориентированное управление организационно-экономической устойчивостью промышленных предприятия в рыночной среде, Под ред. А. Колобова, М., МГТУ, 1997, с. 412.
4. Б.А. Аникин и др. Логистика, Учебное пособие для бакалавров, М., Проспект, 2015, с. 408.
5. Некрасов А.Г., Мельников Д.А., Безопасность цепей поставок в авиаиндустрии, М., Изд. ГУП МТС ГА "Авиатехснаб", 2006, с. 260.

Ներկայացվել է 26.01.2018թ.
Ընդունվել է սպագրության 28.02.2018թ.